ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 07.11.2023թ. հ.023 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի ենթակայության բոլոր դպրոցների՝ այդ թվում Համո Սահյանի անվան հ. 70 հիմնական դպրոցի շենքը պետական սեփականություն է, որի տնօրինման հարցը վերապահված է Պետական գույքի կառավարման կոմիտեին: Բոլոր դպրոցներին շենքերն ամրացված են անհատույց օգտագործման իրավունքով: Ելնելով վերոգրյալից՝ շենքի վերաբերյալ հիմնախնդիրները հիմնականում ուղղվում են Պետական գույքի կառավարման կոմիտե, ինչպես նաև կրթության ոլորտը համակարգող գերատեսչություն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Ինչ վերաբերում է առաջնահերթություններին, ապա տեղեկացվում է, որ ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հուլիսի 23-ի N 797-Ն (վերջին փոփոխությունը՝ 2022 թվականի հոկտեմբերի 27-ի 1666-Ն որոշմամբ) որոշմամբ՝ Համո Սահյանի անվան հ. 70 հիմնական դպրոցն ընգրկվել է ՀՀ-ում սեյսմակայունության տեսակետից առավել վտանգավոր և մինչև 2035 թվականը վերակառուցվելիք դպրոցների ցանկում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ